

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ Ը ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դասընթաց քաղաքացիական հասարակության ակտիվ անհատների, խմբերի և նախաձեռնությունների համար

Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնը հրավիրում է մասնակցելու երկամսյա դասընթացի, նվիրված Հայաստանում քաղաքացիական շարժումների պատմության, դիսկուրսների, պրակտիկաների և դրանց հեռանկարների քննադատական իմաստավորմանը:

Անկախության նվաճման փուլը Հայաստանում անմիջականորեն կապված է 1988-1990 թվականների զանգվածային ժողովրդավարական Շարժման հետ, որի անքակտելի մասն են եղել ինչպես փողոցային բողոքի ցույցերը, այնպես էլ քաղաքացիական ինքնակազմակերպման բազմաթիվ այլ ձևեր: Սակայն, 2008 թվականին սկսված քաղաքացիական ակտիվիզմի փուլը նոր չափելություն հաղորդեց հայաստանյան հասարակությանը, իր հետ բերելով պրակտիկաներ, որոնք էական դեր ունեցան նախ և առաջ քաղաքացիական որակների ձևավորման գործում: Այդ շարժումները, թեև կազմված են առանձին խնդիրների լուծմանն ուղղված քաղաքացիական նախաձեռնություններից, բայց միավորվում են որպես Հայաստանում նոր տեսակի մշակույթի ու գիտակցության ձևավորման ընդհանուր գործընթաց: Նրանց ստեղծած մշակութային տեքստերում նորովի են իմաստավորվում հանրային տարածքի և համերաշխության, սոցիալական պատասխանատվության և սոցիալական արդարության խնդիրները: Քաղաքացիական ակտիվիզմի այդ ալիքը հանդես եկավ որպես 2018-ի հեղափոխական իրադարձությունների շարժիչ ուժերից մեկը և իր գազաթնակետին հասավ նրանում: Այնուամենայնիվ, հեղափոխության ոչ միանշանակ արդյունքները, որոնք առավել ցայտուն ի հայտ եկան հետպատերազմական Հայաստանում, չէին կարող չազդել հասարակության կողմից քաղաքացիական շարժումների ընկալման և նրանց ինքնընկալման վրա: Մտեղծված իրավիճակը նոր մարտահրավերներ է առաջադրել, որոնք չենք կարող լուծվել առանց անցած ճանապարհի, այդ ընթացքում ձևավորված դիսկուրսների և պրակտիկաների քննադատական վերաիմաստավորման, անելիքների և հեռանկարների քննարկման: Այդ հարցերին է նվիրված նախատեսված դասընթացը:

Դասընթացը բաղկացած է տասը մասից: Նրա ընթացքում անդրադարձ կկատարվի քաղաքացիական հասարակության հիմնարար կողմերին և այն կերպափոխումներին, որոնք վերջինս ապրել է տարբեր պատմական փուլերում՝ խորհրդային ժամանակաշրջանից մինչ այսօր: Առանձին ուշադրություն կդարձվի 1988-1990 թվականների համաժողովրդական շարժմանը, կոլիտարկվեն քաղաքացիականը և ակտիվիստականը 2008-ից առաջ և հետո: Քաղաքացիական և ակտիվիստական շարժումները կքննարկվեն «Թավշե հեղափոխության»

հայելում՝ ինչպես նվաճումների, այնպես էլ թերացումների առումով: Կվերլուծվի քաղաքացիական շարժումների ազդեցությունը հասարակական դիսկուրսների ու պրակտիկաների փոփոխության վրա: Անդրադարձ կկատարվի քաղաքացիական շարժումների բերած նոր արդյունքին՝ կապված քաղաքացիական արժեքներ ու մտածողություն կրող անհատների ձևավորման հետ: Դասընթացները նաև կօգնեն հասկանալու, թե ինչպես են շարժումները ձևավորում նոր գիտելիքներ ու հմտություններ, ինչու են դրանք տարբերվում քաղաքական այլ ցույցերից կամ զանգվածային բողոքներից, կներկայացվեն բնապահպանական և կանանց իրավունքների պայքարը և նպատակը, անդրադարձ կկատարվի քաղաքացիական շարժումների ներքին կազմակերպման և խմբային ինքնության կառուցման հարցերին:

Դասընթացը կվարեն Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի նախագահ, փիլիսոփայության դոկտոր Աշոտ Ոսկանյանը, մշակութային մարդաբան, ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու Աղասի Թադևոսյանը, ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Համլետ Մելքունյանը, սոցիոլոգ, հետազոտող, Սոցիոսկոպ ՀԿ-ի ղեկավար Արփի Մանուսյանը, իրավաբան և բնապահպանական մի շարք բնապահպանական նախաձեռնությունների հիմնադիր Արթուր Գրիգորյանը, քաղաքագետ, հետազոտող, մի շարք քաղաքացիական նախաձեռնությունների հիմնադիր և անդամ Օլգա Ազատյանը:

Դասընթացին մասնակցության համար կարող են դիմել հասարակական դաշտում ակտիվ անձինք, որոնք առավելապես բնակվում են Հայաստանում: Խրախուսվում են հատկապես քաղաքացիական շարժումներով հետաքրքրված և դրանցում ակտիվորեն ներգրավված մարզաբնակ երիտասարդները:

Դասընթացը կմեկնարկի 2021 թ. հունիսի 4-ից, առցանց, յուրաքանչյուր ուրբաթ 19:00-21:00-ը և կավարտվի օգոստոսի 6-ին:

Մասնակցության հայտը լրացնել հետևյալ հղումով: <https://forms.gle/ogwn1zoyUWx7HohdA>

Դիմելու վերջնաժամկետն է 2021 թ. մայիսի 28-ը:

Հարցերի դեպքում գրել info@archumanities.am էլ փոստին կամ զանգել 091310391: